Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<u>Ընդհանուր ակնարկ</u>

Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունն անցկացվել է 2013 թվականի փետրվարի 18-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51-րդ հոդվածում նախատեսված ժամկետում:

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների նախապատրաստումն ու կազմակերպումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան (ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին և մտել է ուժի մեջ 2011 թվականի հունիսի 26-ին):

Հարկ է նկատել, որ ընտրական օրենսգրքի նախագիծն անցել էր միջազգային փորձաքննություն, դրանում իրացվել էին փորձագետների ներկայացրած առաջարկություններն ու կարծիքները, իսկ Եվրոպական հանձնաժողով հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով (Վենետիկի հանձնաժողով) և Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) 2011 թվականի սեպտեմբերի 29-ի ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ եզրակացության համաձայն (կարծիք N 611/2011, CDL(2011)020) ընտրական օրենսդրության բարեփոխումների արդյունքում ընդունված օրենսգիրքը գնահատվել է դրական:

2012 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո, Հանրապետության Նախագահի 23.08.2012թ. «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ ՆԿ-116-Ա կարգադրությամբ ստեղծվել էր աշխատանքային խումբ 2012 թվականի մայիսի 6-ին կայացած՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելություն իրականացրած միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցներում ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև դատական ակտերով ներկայացված իրավական դիրքորոշումներն ուսումնասիրելու և դրանք իրականացնելու նպատակով առաջարկություններ ներկայացնելու համար:

Առաջարկությունները, որոնք կրել են կազմակերպչական բնույթ հաշվի են առնվել և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվել են կոնկրետ միջոցառումներ առաջարկությունների իրացումն ապահովելու նպատակով: Սակայն, հիմք ընդունելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկը և ելնելով դրական ընտրական փորձից, համապետական ընտրությունների նախաշեմին ընտրական օրենսդրությունը զերծ

մնաց օրենսդրական փոփոխություններից, չնայած առանձին կանոնակարգումների վերաբերյալ ձևավորված նոր մոտեցումների և առաջարկությունների առկայությանը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 1988 ընտրական տեղամաս, նույնքան էլ տեղամասային ընտրական հանձնաժողովներ, որոնք կազմակերպել և անցկացրել են քվեարկությունը:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով հանրապետության տարածքում կազմավորված էր 41 ընտրատարածք: Նույն օրենսգրքի 34-րդ հոդվածին համապատասխան կազմավորված էր ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակներում ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել 12 միջազգային կազմակերպությունների ընդհանուր թվով 632 դիտորդներ, ինչպես նաև թվով 26 տեղական հասարակական կազմակերպությունների՝ 6.251 դիտորդներ:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության քվեարկությունը տեղի է ունեցել 2013 թվականի փետրվարի 18-ին, իսկ էլեկտրոնային եղանակով արտերկրից իրականացվող քվեարկությունը կազմակերպվել է 2013 թվականի փետրվարի 9-ից Երևանի ժամանակով 08:00-ից մինչև փետրվարի 13-ը՝ ժամը 20:00-ն:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության քվեարկության նախնական արդյունքները հրապարակվել են 2013 թվականի փետրվարի 19-ին, իսկ վերջնական արդյունքները Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց 2013 թվականի փետրվարի 25-ին:

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրության կազմակերպումն ու անցկացումը, խախտումների վերլուծություն

ա) Նորմատիվ որոշումների ընդունում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է ընդուներ 58 նորմատիվ որոշումներ, որոնցով առավել մանրակրկիտ կանոնակարգման էին ենթարկվելու առանձին ընտրական իրավահարաբերությունները: Ընտրական օրենսգրքով նախատեսված բոլոր նորմատիվ բնույթ կրող որոշումները Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել էր դեռևս 2012 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ, իսկ Հանրապետության Նախագահի ընտրության ընթացքում նշված որոշումները փոփոխությունների չենթարկվեցին: Նշված որոշումները «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան գրանցվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից և հրապարակվել Հայաստանի Հանրապետության նորմատիվ գերատեսչական ակտերի տեղեկագրերում: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները զետեղվել են հանձնաժողովի պաշտոնական կայքում (www.elections.am), հրապարակվել են Հայաստանի իրավական տեղեկատվական «Արլիս» (www.arlis.am) համակարգում, դրանք տպագրվել են առանձին ժողովածուի տեսքով և տրամադրվել ընտրական հանձնաժողովների անդամներին, Հանրապետության Նախագահի թեկնածուներին, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին:

բ) Մասնագիտական դասընթացների կազմակերպում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, որոնք կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպում և անցկացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Երևան քաղաքում և մարզերում (մարզերում՝ ըստ ընտրատարածքների)՝ տարին առնվազն մեկ անգամ, քաղաքացիների դիմումների և կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ստուգարքին կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք, անկախ դասընթացին մասնակցելուց: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով:

Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները»:

Նշված իրավական կանոնակարգումներին համապատասխան, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու համար Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները կարող էին առաջադրել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2012 թվականի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 23-ը կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ: Նշված դասընթացներին մասնակցելու համար կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և անհատ քաղաքացիների կողմից ներկայացվել էր 4.728 հայտ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 2.951 քաղաքացիներ, որոնցից 2.583-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:

Հարկ է նկատել, որ 2011թ. կազմակերպված դասընթացների արդյունքում 32.046 քաղաքացիներ արդեն իսկ ունեին որակավորման վկայականներ և նրանց համար նոր վկայական ստանալու պահանջ առկա չէր:

Դասընթացի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների կազմակերպման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները զետեղվել են նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Ստուգարքներն անցկացվել են գրավոր թեստերի միջոցով և գնահատման փուլում բացառվել է սուբյեկտիվիզմով պայմանավորված ցանկացած մոտեցում, գրավոր թեստերի հարցաշարն իր ճիշտ պատասխաններով ևս զետեղված է եղել հանձնաժողովի համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Երևան քաղաքում և հանրապետության բոլոր քաղաքներում: Դասընթացների կազմակերպման և անցկացման, ստուգարքի հանձնման և որակավորման վկայականներ շնորհելու գործընթացը որևէ անձի կողմից չի վիճարկվել:

Դասընթացները պատշաճ կազմակերպելու նպատակով հրատարակվել էր համապատասխան ուղեցույց և տրամադրվել դասընթացի բոլոր մասնակիցներին:

Ուսումնական դասընթացներ են կազմակերպվել և անցկացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար: Վերջիններիս առանձին դասընթացի շրջանակներում ուսուցանվել է նաև ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները, դիմում բողոքների քննության կարգն ու պայմանները: Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո իրականացվեց նաև նշված հանձնաժողովների անդամների ուսուցումը: Նշված ուսուցման կազմակերպման համար ժամանակահատվածը խիստ սահմանափակ էր, քանզի տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են քվեարկության օրվանից 25 օր առաջ: Կազմակերպված ուսուցման ընդհանուր տևողությունը կազմեց 19 օր, իսկ ուսուցմանը մասնակցեցին տեղամասային ընտրական հանձնաժողովների շուրջ 13.047 անդամ կամ որ նույնն է կազմավորված հանձնաժողովների անդամների 85 տոկոսը անցան

համապատասխան ուսուցում: Նշված մասնագիտական դասընթացները կազմակերպվել էր Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) Երևանյան գրասենյակի հետ համատեղ և բոլոր այն քաղաքացիներին, ովքեր դասընթացին մասնակցելու համար պետք է այցելեին այլ համայնք, IFES-ի կողմից փոխհատուցվել է տրանսպորտային ծախսերը:

գ) Հանրային իրազեկում և հրապարակայնություն

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր համապետական ընտրության ժամանակ հրապարակում է ուսումնական ձեռնարկ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել են 8 ուղեցույց, 13 տեղեկատվական բնույթի պաստառ, 5 հանրային իրազեկման հոլովակ, ԿԸՀ որոշումների ժողովածու նաև անգլերեն, 2 օտարալեզու ուղեցույց, հրապարակվել է ուղեցույց նաև բրոյյան այբուբենով (ի դեպ առաջին անգամ Հանրապետության Նախագահի թեկնածուների կենսագրությունները ևս հրապարակվեցին բրոյյան այբուբենով): Բոլոր թեկնածուներին տրամադրվել են 800-ական ընտրական օրենսգրքեր, որոնցում ի դեպ առկա են եղել ՀՀ քրեական և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքերի ընտրական իրավախախտումներին վերաբերող հոդվածները, 300-ական օրինակ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների ժողովածու, 500-ական օրինակ վստահված անձի ուղեցույց: Ի դեպ ուշագրավ է, որ Հանրապետության Նախագահի թեկնածու Ա. Ղուկասյանի խնդրանքով նրան տրամադրվեց 2000 օրինակ վստահված անձի ուցեցույց, սակայն նշված թեկնածուն որևէ տեղամասում չունեցավ վստահված անձ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որին մասնակցել են շուրջ 40 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ԿԸՀ-ում երկու օր անցկացվել են բաց դռների օրեր, որին մասնակցել են 100-ից ավելի քաղաքացիներ, կազմակերպվել են բազմաթիվ ասուլիսներ, հրապարակվել են հոդվածներ և հարցազրույցներ, հեռարձակվել են հեռուստահաղորդումներ: Նշված միջոցառումների մի մասն իրականացվել է առաջին անգամ:

Ընտրական գործընթացի վերաբերյալ նման ծավալով ուսումնադիդակտիկ նյութեր հրապարակվել են առաջին անգամ:

Քվեարկության օրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահում կազմակերպվել է ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգ, որին մասնակցել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև ընտրական գործընթացում առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ,

կազմակերպվել է տեսազանգեր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների հետ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) լիակատար համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփման նիստն ուղիղ եթերով հեռարձակվել է 6 հեռուստաընկերությունների կողմից:

2013 թվականի փետրվարի 1-ից կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր նիստերն ամբողջ ծավալով ուղիղ ժամանակային ռեժիմում առցանց (on-line) հեռարձակվել են հանձնաժողովի համացանցային կայքում, որից հետո տեսագրություններն արխիվացվել և տեղադրվել են հանձնաժողովի կայքում:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին էականորեն կարևորվում է տեղեկատվության հասանելիությունը, ինչն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքով:

Կայքում զետեղված է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:

Կայքում ներկայացված «Տեղեկատվական կենտրոն» բաժինն ի թիվս այլ տեղեկությունների, պարունակում է ամբողջական տեղեկատվություն կենտրոնական ընտրական հանձնաժողովում իրականացվող վարչական վարույթների մասին, իսկ «Նյութեր» բաժնում ներկայացված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված և ընտրական գործընթացի համար անհրաժեշտ բոլոր ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակները՝ ներբեռնման հնարավորությամբ: Կայքում, ներբեռնման հնարավորությամբ տեղադրվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված բոլոր ձեռնարկներն ու ուղեցույցները: Կայքը պարունակում է տեղեկատվություն 2005 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող բոլոր ընտրությունների վերաբերյալ: Կայքի միջոցով հնարավոր է ծանոթանալ ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող ողջ տեղեկատվությանը, ընտրական օրենսդրությանը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին, ընտրական գործընթացներին վերաբերող միջոցառումներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրված է ընտրողների ռեգիստրը՝ որոնման հնարավորությամբ: Հարկ է նկատել, որ իրականացված ծրագրային նոր լուծումների

արդյունքում, յուրաքանչյուր քաղաքացի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի ընտրողների ռեգիստր բաժնից կարող է ստանալ ուղղակի տեղեկություններ ոչ միայն ցանկացած ընտրողի վերաբերյալ, այլև տեղեկանալ թե քանի քաղաքացի է հաշվառված կոնկրետ հասցեում:

Իրականացվել են ծրագրային փոփոխություններ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթների պահանջներին «Ընտրություններ» ավտոմատացված համակարգը համապատասխանեցնելու նպատակով:

դ) Ընտրողների ռեգիստր, ընտրողների ցուցակներ

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրություններին ընտրողների ցուցակներում ընտրողների թիվը եղել է 2.484.003, իսկ Հանրապետության Նախագահի 2013թ. փետրվարի 18-ի ընտրությանը՝ ընտրողների ցուցակներում ընտրողների թիվը 26.01.2013թ. դրությամբ՝ եղել է 2.507.004, ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրելու իրավունք ունեցող անձանց թվաքանակն աճել է 23.001-ով:

06.05.2012թ. մինչև 26.01.2013թ. ընկած ժամանակահատվածում ընտրողների ռեգիստրում ընդգրկվել է.

- 2012թ. մայիսի 6-ից հետո՝ 18 տարին լրանալու կապակցությամբ 29.986 քաղաքացի,
- առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու և ՀՀ-ում հաշվառվել կապակցությամբ 12.018 քաղաքացի,
- հաշվառվել են մինչև 06.05.2012թ.-ը հաշվառումից հանված 24.950 քաղաքացի,
- ՀՀ քաղաքացիություն ընդունած՝ 4.312 քաղաքացի, հաշվառվել են հանրապետության տարածքում՝ ՀՀ քաղաքացիություն ընդունելուց հետո,
- քաղաքացիության ճանաչման հիմքով ՀՀ քաղաքացու անձնագիր ձեռք բերած՝ 1.045 քաղաքացի:

Նույն ժամանակահատվածում հաշվառումից հանվել են.

- մահվան հիմքով 18.670 անձ,
- սեփականատիրոջ դիմումով՝ 12.294-ը,
- տարբեր այլ պատճառներով՝ 15.194 անձ,
- հյուպատոսական հաշվառման կանգնած 3.152 քաղաքացի (հանվել են միայն ընտրողների ցուցակից):

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, որպես բնակչության պետական ռեգիստը վարող մարմին, տարին 2 անգամ՝ հունիսին և նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), Հայաստանի Հանրապետության ընտրողների

ռեգիստրը՝ ըստ համայնքների, իսկ համապետական ընտրությունների դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ՝ նաև ըստ ընտրական տեղամասերի, էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի մշտական և անբաժանելի մասն է:

Ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ ընտրողների ցուցակը ներբեռնման հնարավորությամբ տեղադրվել է նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության կայքում:

Եթե քվեարկության օրվանից 40 օր առաջ հրապարակված ցուցակներում առկա են եղել որոշ անճշտություններ, ապա քվեարկության օրվանից 2 օր առաջ հրապարակված վերջնական ցուցակները գրեթե զերծ են եղել անճշտություններից:

Ընտրողների ցուցակներում առկա անճշտությունների վերաբերյալ անձնագրային և վիզաների վարչությունը ստացել է 4.018 ստուգման ենթակա տվյալ: Ընդ որում՝ 1.893-ը ստացվել են ոստիկանության տարբեր ստորաբաժանումներից, 1.403-ը՝ Ընտրական համակարգերի միջազգային հաստատության հայաստանյան գրասենյակից, 468-ը՝ «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» հասարակական կազմակերպությունից, 115-ը՝ զանգվածային լրատվության միջոցներից, 35-ը՝ անձնագրային և վիզաների վարչության «Թեժ գիծ» ծառայությունից:

Թվով 4.018 տվյալների ստուգման արդյունքում ընտրողների ցուցակներում կատարվել է 2.047 փոփոխություն և ուղղում:

Մասնավորապես՝ ընտրացուցակներից հանվել են 2.028 մահացած անձի վերաբերյալ տվյալ, 4 քաղաքացու տվյալներ ընդգրկվել են ընտրողների ռեգիստր, շտկումներ են կատարվել 15 քաղաքացու հաշվառման հասցեներում: Փաստորեն, ուղղման ենթակա անճշտությունները 19-ից չեն անցել:

Հաշվի առնելով 2012 թվականի մայիսի 6-ի Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցում տեղ գտած առաջարկությունները՝ ընտրացուցակների ստուգման աշխատանքներում ոստիկանությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել քանդված շենքերի և բազմաթիվ հաշվառում ունեցող հասցեներին:

24 անձնագրային ծառայությունների կողմից սպասարկվող վարչական տարածքներում հայտնաբերվել են 1.255 քանդված, փլուզված կամ այլ կերպ գոյություն չունեցող բնակելի տարածությունների հասցեներ:

Հիշյալ հասցեներից փոխհատուցման կարգով բնակելի տարածություններ ստացած քաղաքացիներին հաշվառումից հանելու և իրական բնակության վայրի հասցեներում նրանց հաշվառելու նպատակով ոստիկանության ծառայողները այցելություններ են կատարել 19.549 քաղաքացիների բնակարաններ, որոնցից՝

ա) 16.911-ին պարզաբանել են բնակչության պետական ռեգիստրի մասին օրենսդրության պահանջները,

բ) 2.638-ին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն արդյունք չեն տվել:

Բացի այդ, ՀՀ բնակչության պետական ռեգիստրի պահոցում իրականացված ուսումնասիրությամբ ի հայտ են բերվել նաև 12.192 հասցեներ, որոնցում հաշվառված են 10 և ավելի անձինք: Դրանցից՝ 4.810-ը մարզերում, 7.382-ը՝ Երևան քաղաքում:

Բնակարանների սեփականատերերին պարզելու, վերջիններիս բնակելի տարածություններում հաշվառված, սեփականության և օգտագործման իրավունք չունեցող անձանց հաշվառումից հանելու օրենսդրությամբ նախատեսված իրավական հնարավորությունները պարզաբանելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ ոստիկանության ծառայողները այցելություններ են կատարել նաև նշված բոլոր հասցեներ:

Ընտրողների ցուցակներն իրենց վերջնական տեսքով ունեցել են ճշտության աննախադեպ բարձր մակարդակ: Դա են վկայում նաև քվեարկության օրը ընտրողների ցուցակների վերաբերյալ ստացված բողոքները (2 բողոք) և ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանքների աննախադեպ ցածր թիվը: Ընտրողների ցուցակների հետ կապված վեճերով դատարան է ներկայացվել 17 հայց՝ քվեարկության օրը ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին լիազոր մարմնի կողմից տեղեկանք չտրամադրվելու վերաբերյալ, որոնք բոլորն էլ բավարարվել են:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի կարևոր նորամուծություններից է ներբեռնման հնարավորությամբ ընտրողների ցուցակի տեղադրումը Հայաստանի Հանրապետության ոստիկանության կայքում, ավելին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու մասին լիազոր մարմին դիմում ներկայացնելու իրավունք է վերապահվել յուրաքանչյուր անձի, ընդ որում՝ տրվել է օրենսդրական հնարավորություն ներկայացնելու անգամ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում: Նշված իրավական կարգավորումների արդյունքում ընտրողների ցուցակները ենթակա են եղել լիակատար վերահսկողության ընտրական գործընթացի մասնակից բոլոր սուբյեկտների և հասարակության կողմից:

Ընտրողների ցուցակում առկա է եղել 111 անհատական տվյալների համընկնում, երբ բացի հաշվառման հասցեից մնացած բոլոր տվյալները համընկել են: Նշված բոլոր տեղեկությունները ստուգվել են և արդյունքում պարզվել, որ նշվածը ոչ թե անճշտություն է, այլ խոսքը վերաբերում է համընկնող տվյալներով 222 ընտրողների: Նշվածի վերաբերյալ ներկայացվել է ոչ միայն մանրամասն տեղեկատվություն, անգամ հրապարակվել է նշված անձանց ցուցակը:

ե) Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրություններին Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրվելու փաստաթղթեր էին ներկայացրել 15 քաղաքացիներ: Նշված քաղաքացիներից երկուսն առաջադրվել էին կուսակցությունների կողմից, իսկ մնացած 13 քաղաքացիները՝ ինքնաառաջադրման կարգով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի թեկնածուները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընտրական գրավ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի (այսուհետ՝ նվազագույն աշխատավարձ) 8 000-ապատիկի չափով:

Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրվելու փաստաթղթեր ներկայացրած քաղաքացիներից միայն յոթ քաղաքացի էր վճարել ընտրական գրավի գումարը:

Հայաստանի Հանրապեության ընտրական օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերում անճշտությունների կամ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը թերի լինելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը 48 ժամ է տալիս նշված անճշտությունները վերացնելու, կից ներկայացված փաստաթղթերը լրացնելու համար: Այդ ժամանակահատվածում անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում թեկնածուի գրանցումը մերժվում է:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով նշված ընտրական գրավի գումարը չվճարած քաղաքացիներին տրամադրվեց 48 ժամ ժամանակ ընտրական գրավի գումարը վճարելու համար: Նշված քաղաքացիներից միայն մեկի կողմից սահմանված կարգով կատարվեց ընտրական գրավի վճարման պարտավորությունը, իսկ մեկ քաղաքացի էլ մինչև գրանցումը դիմեց հանձնաժողովին խնդրելով վերադարձնել իր գրանցման փաստաթղթերը չքննարկելով իր գրանցման հարցը:

Արդյունքում Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրվելու փաստաթղթեր ներկայացրած քաղաքացիներից ութը՝ Հրանտ Բագրատյանը, Պարույր Հայրիկյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, Անդրիաս Ղուկասյանը, Արման Մելիքյանը, Արամ Հարությունյանը, Սերժ Սարգսյանը, Վարդան Սեդրակյանը գրանցվեցին որպես Հանրապետության Նախագահի թեկնածուներ: Հանրապետության Նախագահի թեկնածու Արամ Հարությունյանն ինքնաբացարկ ներկայացնելու համար սահմանված ժամկետի վերջին օրը ներկայացրեց ինքնաբացարկ և 2013թ. փետրվարի 18-ին քվեարկվեցին յոթ թեկնածու:

զ) Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է

Հանրապետության Նախագահի թեկնածուների գրանցման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- նախընտրական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (ընդհանուր թիվը 594, այդ թվում՝ 34-ը Երևանում).

- քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված անվճար տեղերի ցանկը (ընդհանուր թվով 557, այդ թվում՝ 253-ը Երևանում).

- հեռուստառադիոընկերությունների կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

Ըստ նախապես ներկայացված հայտերի կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրել է հինգ քառակուսի մետրը գերազանցող արտաքին գովազդային վահանակների բաշխումը Հանրապետության Նախագահի թեկնածուների միջև:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանվել էր հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից ընտրություններին մասնակցող Հանրապետության Նախագահի թեկնածուների անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը:

Նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարված են եղել մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է թեկնածուների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Նախընտրական քարոզչությունն ընթացել է ակտիվ, մրցակցային: Նախընտրական հավաքների, խոսքի և տեղաշարժվելու ազատության որևէ սահմանափակում չի արձանագրվել:

Հունվարի 31-ի ուշ երեկոյան, Երևանի կենտրոնում անհայտ անձի կողմից հրազենային վնասվածք ստացավ թեկնածու Պարույր Հայրիկյանը: Հաջորդ օրը նա ենթարկվեց վիրահատական միջամտության, իսկ իրավապահ մարմիններն անմիջապես սկսեցին հետաքննությունը: Չնայած փետրվարի 5-ին պարոն Հայրիկյանը հայտարարել էր, որ չի դիմելու Սահմանադրական դատարան ընտրությունները հետաձգելու նպատակով, սակայն փետրվարի 10-ին ներկայացրել էր դիմում, որը հետ վերցրեց հաջորդ օրը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը մշակել, 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 38-Ա որոշմամբ հաստատել և հրապարակել է «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող

հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող թեկնածուների համար հավասար պայմաններ ապահովելու գնահատման մեթոդաբանությունը»:

2013թ. հունվարի 21-ից մինչև փետրվարի 18-ը նշված հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թվով 44 հեռուստաընկերությունների և 20 ռադիոընկերությունների վերգետնյա եթերային հեռարձակմամբ սփռված ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հեռարձակած ծրագրերի մշտադիտարկումն իրականացրել է.

- հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) անմիջական դիտարկման արդյունքների.

- գրանցամատյանների և հեռուստառադիոընկերություններից ստացված տեղեկատվության.

- թեկնածուների և (կամ) նրանց ներկայացուցիչների Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության.

- հեռուստառադիոընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին լրատվամիջոցների հրապարակումների.

- պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմա-կերպությունների ներկայացրած կամ հրապարակած տեղեկատվության.

- սեփական ուսումնասիրության հիման վրա:

Նշված ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ավելի քան 11.689 տևողությամբ եթերաժամ, որից 9.097 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում, այդ թվում, 408 ժամը՝ մարզեր կատարած գործուղումների արդյունքում, իսկ 2.592 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում: Ուղղակի մշտադիտարկումը (այդ թվում՝ գործուղումների միջոցով) իրականացվել է հեռուստառադիոընկերությունների վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Վերգետնյա հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները 28.01.2013թ., 07.02.2013թ. և 20.02.2013թ. ներկայացրել են իրենց կողմից հեռարձակված ծրագրերի մասին տեղեկատվություն: Ստացված տեղեկատվությունը տվյալներ է պարունակել յուրաքանչյուր ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածուներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին.

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակի.

- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի.

- նրանց և (կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումների ընդհանուր տևողության.

- լրատվական ծրագրերում նրանց նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման ընդհանուր տևողության մասին:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անմիջական դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են տեղեկանքներում, որոնք, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 30.01.2013թ., 09.02.2013թ. և 22.02.2013թ., հրապարակվել են հանձնաժողովի կայքէջում, ինչպես նաև նշված ժամկետներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններին մասնակցող թեկնածուներին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի և դրա սակագնի մասին հայտարարել են թվով 19 հեռուստաընկերություն և 3 ռադիոընկերություն:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013թ. փետրվարի 18-ի ընտրություններին մասնակցող թեկնածուներին վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 21.01.13-16.02.13թթ. ժամանակահատվածում տրամադրված եթերաժամանակի հետևյալ ցուցանիշները՝

- անվճար կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 1032' 15'': Հանրապետության Նախագահի թեկնածուներն օգտագործել են իրենց համար նախատեսված 1368' անվճար եթերաժամանակի ընդամենը 75.4 %-ը,

- վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 3250' 25'',

- հեռուստառադիոընկերությունների հաղորդումներում Հանրապետության Նախագահի թեկնածուների և (կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցության ընդհանուր տևողությունը կազմել է 9384' 48'',

- հեռուստառադիոընկերությունների լրատվական թողարկումներում Հանրապետության Նախագահի թեկնածուների կողմից իրականացված նախընտրական քարոզչության լուսաբանման ընդհանուր տևողությունը կազմել է 21545' 41'',

- նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող թեկնածուներին վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 35213' 08'', այսինքն, ավելի քան 586 ժամ:

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել:

2013թ. հունվարի 21-ից մինչև փետրվարի 18-ը ընկած ժամանակահատվածում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, կենտրոնական ընտրական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածուներից, նրանց լիազոր ներկայացուցիչներից, ինչպես նաև պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից լուսաբանման հետ կապված նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չի ստացել:

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների քարոզարշավի (21.01.13-16.02.13թթ.), ինչպես նաև լռության օրը և քվեարկության օրը մինչև ժամը 20:00-ն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Այդուհանդերձ, եղել են եթերաժամանակի տրամադրման անհամաչափության առանձին դեպքեր: Նշվածը մասամբ պայմանավորված էր թեկնածուների կողմից իրենց նախընտրական քարոզչության պլանավորման և իրականացման՝ միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման անհամասեռություններով, քարոզչության իրականացման, ինչպես նաև նրանց նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամության առանձնահատկություններով, որը դրսևորվել է որպես օրինաչափություն բոլոր հեռուստառադիոընկերությունների եթերում:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված առանձին խախտումներ վերաբերել են արգելված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն, չթույլատրված վայրերում ընտրական շտաբների տեղակայման, վարչական ռեսուրսի առաձին չարաշահումների և այլ մասնավոր դեպքերի, որոնք որևէ ազդեցություն չեն ունեցել ընտրության արդյունքի վրա: Նշված դեպքերի հետ կապված չնայած որևէ դիմում բողոք ներկայացված չի եղել, սակայն լրատվամիջոցների և թեկնածուների կայքերի տեղեկությունների հիման վրա կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվել են վարչական վարույթներ, անցկացվել վարույթով լսումներ և ընդունվել համապատասխան որոշումներ:

Նախընտրական քարոզչության կազմակերպման կարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչները Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ կազմակերպել են շրջայց Երևան քաղաքում, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները՝ ընտրատարածքում գտնվող բնակավայրերում: Օրենքով չսահմանված վայրերում փակցված նախընտրական քարոզչական նյութեր հայտնաբերվելու դեպքում դրանք անմիջապես վերացվել են:

Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Հայաստանի

Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

Հանրապետության Նախագահի ընտրություններում գրանցված 7 թեկնածուներից նախընտրական հիմնադրամ բացել են 6-ը: Հանրապետության Նախագահի թեկնածու Արման Վարդանի Մելիքյանը նախընտրական հիմնադրամ չի բացել, ինչի մասի թեկնածուն հայտարարություն է ներկայացրել կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն առ այն, որ ինքը նախընտրական հիմնադրամ չի բացել և Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում քարոզչական ծախսեր չի կատարել:

Հանրապետության Նախագահի թեկնածուները, ինչպես և պահանջվում է ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ, այն է՝ 30.01.2013թ-ին, 09.02.2013թ-ին և 22.02.2013թ-ին կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներկայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերում ամրագրված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագրեր, վճարման հանձնարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլ ֆինանսական փաստաթղթեր): Միաժամանակ, վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից, երեք աշխատանքային օրը մեկ, տեղեկանքներ է ստացել թեկնածուների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և հիմնադրամներից կատարված ծախսերի վերաբերյալ:

Ուսումնասիրելով նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և կից փաստաթղթերը, դրանց տվյալները համադրելով կենտրոնական բանկի ներկայացրած տեղեկատվության և «Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2013 թվականի փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ» Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի եզրակացության տվյալների հետ՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կազմել է ամփոփ տեղեկանք և հայտարարագրերը ստանալուց հետո երկու օրվա ընթացքում ներկայացրել կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը: Հանձնաժողովի նիստում քննարկվելուց և վերջինիս հավանությունը ստանալուց հետո, տեղեկանքը տեղադրվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկողական այս գործառույթն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում: Բացի այն, որ Հանրապետության Նախագահի թեկնածուների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, բանկերից ստացած տեղեկանքները և վերջիններիս ուսումնասիրության արդյունքում վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմած ամփոփ տեղեկանքը հրապարակվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, այդ գործընթացի նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն են ունեցել նաև Ազգային ժողովում գործող խմբակցությունների կողմից նշանակված աուդիտորի որակավորում ունեցող մեկական աուդիտորները: Պետք է նշել, որ գործող վեց խմբակցություններից հինգը օգտվել են ընտրական օրենսգրքի ընձեռած այդ հնարավորությունից:

Այն, որ Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ իրականացվել է պատշաճ և արդյունավետ վերահսկողություն և, որ այդ գործընթացն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում, փաստվում է նաև այն հանգամանքով, որ նախընտրական քարոզչության փուլում կենտրոնական ընտրական հանձնաժողովը որևէ դիմում (բողոք) չի ստացել նախընտրական քարոզչության ֆինանսավորման սահմանված կարգի խախտումների վերաբերյալ:

Միայն քվեարկությունից հետո Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանը դիմում է ներկայացրել կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի կողմից նախընտրական քարոզչության ֆինանսավորման սահմանված կարգի խախտման փաստն արձանագրելու և դրանով պայմանավորված վերջինիս գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դատարան դիմելու խնդրանքով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում քննել և պատճառաբանված որոշմամբ մերժել էր այդ դիմումը: Դիմումատուի կողմից կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է դատական կարգով: Թիվ ՎԴ/1423/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 04.03.2013թ. կայացրել է որոշում հայցը մերժելու մասին:

Է) Քվեարկություն

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների անցկացման նպատակով կազմավորվել էր 1988 ընտրական տեղամաս, որից 7-ը կազմավորվել էր կալանավորված անձանց պահելու վայրերում: Քվեարկության օրը, ժամը 7:00-ին 1981 տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոններն ու սկսվել է քվեարկությունը: Կալանավորված անձանց պահելու վայրերում կազմավորված տեղամասային կենտրոններից մեկը բացվել է ժամը 10:00-ին, իսկ մնացած 6 տեղամասային կենտրոնները բացվել են ժամը 17:00-ին:

Թվով 1988 տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ 884-ական,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)՝ 619-ական,

Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք (ՀԱԿ)՝ 155-ական,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)՝ 110-ական,

«Օրինաց Երկիր» կուսակցություն (ՕԵԿ)՝ 110-ական,

«Ժառանգություն» կուսակցություն (ԺԿ)՝ 110-ական:

ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ խմբակցությունների կողմից նշանակումներ են կատարվել բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում, ՀԱԿ-ի կողմից նշանակումներ չեն կատարվել թվով 451 տեղամասային ընտրական հանձնաժողովներում, ՀՅԴ-ի կողմից՝ 51 տեղամասային ընտրական հանձնաժողովներում և «Ժառանգություն» կուսակցության կողմից՝ 66 տեղամասային ընտրական հանձնաժողովներում:

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակված անդամներից չեն ներկայացել՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ 21,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)՝ 24,

Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք (ՀԱԿ)՝ 56,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)՝ 28,

«Օրինաց Երկիր» կուսակցություն (ՕԵԿ)՝ 27,

«Ժառանգություն» կուսակցություն (ԺԿ)՝ 38:

Այսպիսով, քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներում կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից նշանակված անդամները գործել են հետևյալ թվով՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ 1967 (98.9%),

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)՝ 1950 (98.0%),

Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք (ՀԱԿ)՝ 1481 (74.4%) ,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)՝ 1909 (96.0%),

«Օրինաց Երկիր» կուսակցություն (ՕԵԿ)՝ 1961 (98.6%),

«Ժառանգություն» կուսակցություն – 1884 (94.7%)

Ընդհանուր առմամբ տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության օրն աշխատել են 15.652 քաղաքացիներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամը 9:00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12:00-ից սկսած՝ մինչև ժամը 21:00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի (մարզում՝ նաև ըստ մարզկենտրոնների և մարզի՝ 10.000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների) և Երևան քաղաքի հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը

մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ին կայացած ընտրության քվեարկության օրը հանրապետության 1988 ընտրական տեղամասերում միասին վերցրած ընտրական գործընթացին հետևել և տեղամասային կենտրոններում ներկա են գտնվել են Հանրապետության Նախագահի թեկնածուների թվով 5.038 վստահված անձ:

Հանրապետության Նախագահի թեկնածուներն ընտրական տեղամասերում ունեցել են.

Հրանտ Բագրատյանը 299 վստահված անձ,

Պարույր Հայրիկյանը 141 վստահված անձ,

Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանը 1009 վստահված անձ,

Սերժ Սարգսյանը 3589 վստահված անձ:

Հանրապետության Նախագահի ընտրության քվեարկության օրը միջազգային դիտորդներն այցելել են թվով 1208 տեղամասային կենտրոններ, թվով 1426 տեղամասային կենտրոններում ներկա են գտնվել թվով 4469 տեղական դիտորդներ, իսկ թվով 1321 տեղամասային կենտրոններում աշխատել են զանգվածային լրատվության միջոցների թվով 1993 ներկայացուցիչներ:

Քվեարկությունն անցել է հանգիստ և խաղաղ մթնոլորտում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում քվեարկության օրը վստահված անձանց իրավունքների իրականացմանը խոչընդոտելու կամ վերջիններիս լիազորությունները սահմանափակելու վերաբերյալ դիմումներ չեն ստացվել: Վստահված անձանց կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառում կատարելն արգելելու մասին ևս որևէ բողոք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները չեն ստացել: Գործնականում, սակայն չի բացառվում, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում, հանձնաժողովների անդամների և վստահված անձանց միջև եղած լինեն տարաձայնություններ, կոնֆլիկտային իրավիճակներ՝ ընտրական օրենսգրքի տարբեր դրույթների բովանդակության կամ դրանց կիրառման վերաբերյալ, որոնք հենց տեղում հարթված լինեն: Տեղամասային ընտրական հանձնաժողովներն աշխատել են մեծ ծանրաբեռնվածությամբ, նաև ընտրողների ակտիվության պատճառով երբեմն առաջացել են հերթեր, սակայն չի գրանցվել որևէ դեպք, որ այդ պատճառով խոչընդոտվի ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և որևէ ընտրող այդ պատճառով զրկվի ընտրական իրավունքից:

ը) Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր 1988 ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական

օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները, ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 10 ժամվա ընթացքում, ավարտել են քվեարկության արդյունքների ամփոփումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 00:00-ից սկսած՝ իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի՝ իր պաշտոնական կայքում հրապարակելով Հանրապետության Նախագահի ընտրության նախնական արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքով ռեալ ժամանակի մեջ հնարավոր էր հետևել ընտրության արդյունքների ամփոփմանը՝ ստանալով յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները: Ընտրության արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ:

Այդուհանդերձ, նկատենք, որ ըստ ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնք ստացվել էին 15 տեղամասերի վերաբերյալ, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում զետեղվեց ժամը 23:15-ի սահմաններում, որից հետո՝ մոտավորապես ժամը 23:20-ից 23-40-ը հնարավոր չէր մուտք գործել կայք, ինչը պայմանավորված էր կայք ավելի քան 40.000 օգտվողների, այդ թվում՝ 14 օտարերկրյա պետություններից, միաժամանակյա այցելության արդյունքում առաջացած ծանրաբեռնվածությամբ: Նախնական պատրաստվածությունը հնարավորություն տվեց կայքից օգտվելու բարդությունները վերացնել մոտ 20 րոպեի ընթացքում և մինչև աղյուսակավորման ավարտը համակարգը գործել է՝ չառաջացնելով որևէ խնդիր:

Նշվածով պայմանավորված եղան անհարկի, սին և հիմնազուրկ շահարկումներ, սակայն նկատենք, որ չարձանագրվեց թեկուզև մեկ դեպք, երբ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները տարբերվեն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված տվյալներից, չի ներկայացվել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից որևէ քաղվածք, որի տվյալները կտարբերվեին կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված արձանագրության տվյալներից, կամ նախապես ներկայացված աղյուսակավորման տվյալներից: Նշվածը հենց ապացույցն է այն հանգամանքի, որ «կայքի խափանման միտումնավորության» վերաբերյալ դատողությունները, բացառապես պահի թելադրանքին հագուրդ քաղաքական շահարկումների համատեքստում բանական տրամաբանությունից զուրկ հորինվածք են:

թ) Քվեարկության արդյունքների վերահաշվարկ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը:

Վերահաշվարկ կատարելու դիմում ներկայացանելու իրավունք ունեն թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում: Իրավանորմով նման սուբյեկտային կազմի սահմանումը չի կրում ինքնանպատակ բնույթ: Վերահաշվարկի դիմում ներկայացնելու իրավունքից օգտվում են ընտրական գործընթացի այն մասնակիցները, ովքեր ունեն ուղղակի սուբյեկտիվ շահեր, մասնակացել են, ներկա են գտնվել տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, արձանագրել են իրենց կարծիքով թույլ տրված խախտումները, նկատել են սխալ իրականացված հաշվարկը և այլն: Այսինքն, դիմում ներկայացնող անձն արդեն իսկ ունի լիակատար պատկերացում տեղամասում իրականացված հաշվարկի վերաբերյալ և վերահաշվարկի միջոցով, ըստ էության, նպատակ է հետապնդում արձանագրելու այդ խախտումները:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացնելու համար օրենքը սահմանել է հստակ ժամկետ՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն: Նշված ժամկետը կարճ լինելու պատճառաբանությունը, չի կարող որակվել իրավունքի իրականացմանը խոչընդոտող գործոն, քանզի նման դիմում ներկայացնող անձինք ներկա են գտնվել ընտրական տեղամասում և հստակ պատկերացնում են, թե ինչ նպատակով են պահանջելու այդ վերահաշվարկը: Վերահաշվարկի դիմումի համար սահմանված են տարրական, պարզագույն պահանջներ: Այն պետք է ներառի դիմումատուի անունը, ազգանունը, փոստային հասցեն և այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ, ինչպես նաև այն քվեարկության արդյունքները (եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն), որոնց վերաբերյալ պահանջվում է վերահաշվարկ անցկացնել:

Դիմումին քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ կցելը սոսկ դիսպոզիտիվ պարտականություն է և դրա չկատարումը չի կարող որևէ հետևանքի, այդ թվում՝ վերահաշվարկի կատարումը մերժելու հանգեցնել: Ակնհայտ է, որ նման դիմում ներկայացնելու համար առանձնահատուկ իրավական գիտելիքներ չեն պահանջվում, դիմումի լրացուցիչ պատճառաբանության, իրավական հիմնավորումների պահանջ գոյություն չունի:

Ի դեպ, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստված և ընտրական գործընթացի մասնակիցներին տրամադրված ձեռնարկներում մանրամասն ներկայացված է վերահաշվարկի ինստիտուտը, հստակորեն առանձնացված են ժամկետները, այդ ինստիտուտն առանձին ներկայացվել է տեղամասային ընտրական

հանձնաժողովների անդամների համար կազմակերպված դասընթացներին, իսկ տեղամասային կենտրոններում փակցված է եղել համապատասխան պաստառ դիմում-բողոքներ ներկայացնելու կարգի վերաբերյալ:

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ին կայացած ընտրություններում կազմավորված թվով 1988 ընտրական տեղամասերում ընտրության քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին ներկայացվել է 12 դիմում՝ 9 ընտրական տեղամասերում ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Ներկայացված վերահաշվարկի մասին դիմումներից 10-ը ներկայացվել է Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի երկու վստահված անձանց կողմից, որոնք վերաբերել են թվով 7 ընտրական տեղամասերի, 1 դիմում Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի վստահված անձի կողմից և 1 դիմում հատուկ կարծիք ներկայացրած թիվ 3/33 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից (Ժառանգություն կուսակցության կողմից նշանակված):

Վստահված անձանց դիմումներով վերահաշվարկների իրականացումը մերժվել է, քանի որ դիմումատուները ներկա չեն գտնվել քվեարկության արդյունքների ամփոփմանն այն ընտրական տեղամասերում, որոնց վերաբերյալ ներկայացրել են վերահաշվարկի պահանջի մասին դիմումներ (ներկա չգտնվելու փաստը չեն վիճարկել նաև դիմումատուները), հետևապես չեն հանդիսանում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ դիմումները մերժելու և վերահաշվարկ չիրականացնելու մասին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված վերահաշվարկի մասին դիմումը բավարարվել է և վերահաշվարկվել են թիվ 3/33 տեղամասում քվեարկության արդյունքները:

Վերահաշվարկվել են նաև թիվ 2/03, 2/05 տեղամասերի քվեարկության արդյունքները՝ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ:

Իրականացված վերահաշվարկների արդյունքում որևէ էական փոփոխություն չի արձանագրվել:

Վերահաշվարկի աշխատանքները իրականացվել են բաց, թափանցիկ, բոլոր նրանք ովքեր ցանկություն են ունեցել ներկա գտնվել վերահաշվարկի աշխատանքներին, նրանց հնարավորություն է տրվել ներկա գտնվել և ազատորեն ծանոթանալ քվեարկված քվեաթերթիկներին, սահմանված նմուշի ծրարներին, մարված քվեաթերթիկներին, ընտրողների ստորագրած ցուցակներին և այլն:

Ի դեպ, տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության օրն աշխատած 15.652 հանձնաժողովի անդամներից միայն 1-ը, կամ որ նույնն է 0.006%-ն է կատարել գրառում հատուկ կարծիք ունենալու մասին, իսկ կազմված արձանագրությունները ստորագրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների ներկա բոլոր անդամների կողմից:

Ժ) Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն.

«Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել միայն քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն»: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե բողոքի կամ դիմումի քննարկման արդյունքով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, իսկ խախտումն արտահայտված չէ անճշտություններում, ապա այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն:

Նման դիմում ներկայացնելու իրավունք ունեն՝

1) թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը).

2) վստահված անձը, եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին.

4) կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը:

Ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում իրավունք ունեն ներկա լինելու վստահված անձինք, դիտորդներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարահանել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:

Վերլուծելով վերոհիշյալ իրավանորմերը, ակնհայտ է դառնում, որ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելը հնարավոր է այն դեպքերում, երբ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել ընտրական օրենսգրքի պահանջների խախտումներ, դրանք պետք է լինեն այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները: Իրավանորմից ակնհայտ է, որ քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման ինստիտուտն ուղղակի պայմանավորված է ընտրական տեղամասում քվեարկության կամ ամփոփման ընթացքում տեղ գտած իրավախախտումներով: Եթե նշված իրավանորմերը դիտարկենք այն լայն իրավազորությունների ներքո, որոնք սահմանված են վստահված

անձանց համար, ապա ակնհայտ է դառնում, որ քվեարկության ընթացքում տեղ գտած բոլոր բնույթի իրավախախտումները նկատվելու կամ արձանագրվելու են հենց քվեարկության ընթացքում և քվեարկության ընթացքին հետևող վստահված անձի համար, հենց քվեարկության ընթացքում արդեն իսկ ակնհայտ է ընդհանուր գործընթացի գնահատականը: Նման դեպքերում, ակնհայտ է, որ քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում ներկայացնելու ժամկետներն իրական են ու ողջամիտ, նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընտրատարածքային կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ունի խիստ սահմանափակ ժամանակ ընտրության արդյունքների ամփոփման համար:

Այս հնարավորությունը կարող էր օգտագործվել առանձին տեղամասերում տեղի ունեցած քվեարկության արդյունքների վերաբերյալ հնարավոր խախտումների մասին դիմում-բողոք բերելու, ապացույցներ ներկայացնելու և կոնկրետ տեղամասում քվեարկության օրինականությունը վիճարկելու համար:

Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի կողմից միասնական տեսքի ձևաթղթով, որոնցում փոփոխված էին սոսկ ընտրական տեղամասի համարը (համարները), թեկնածուների ստացած կողմ ձայները և, ոչ թե փաստական հանգամանքներն անհատականացնող տեղեկություններ, ներկայացվել էր քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու 70 դիմում, որոնցով պահանջվում էր անվավեր ճանաչել հանրապետությունում կազմավորված 1988 տեղամասերից 120 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Ներկայացված բոլոր դիմումները սահմանված կարգով քննարկվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերում: Հիմք ընդունելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, նիստերի արձանագրությունները և ամփոփելով ներկայացված դիմումները կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստել է՝

ներկայացված դիմումներից 23-ը, որոնցով պահանջվում էր անվավեր ճանաչել հինգ ընտրատարածքների ընդհանուր թվով 73 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, թիվ 12 (ք. Երևան), 13 (ք. Երևան), 17 (ք. Արտաշատ), 37 (ք. Գորիս), 38 (ք. Կապան) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին էին ուղարկվել փոստային առաքմամբ: Նշված հինգ դիմումներն առաքվել էին միևնույն՝ թիվ 42 փոստային բաժանմունքից: Ծրարները, որոնցում առկա էին եղել դիմումները, պարունակում էին փաստաթղթերը փոստային բաժանմունք մուտք անելու կնիք, ըստ որի դիմումները մուտք էին արվել փոստային բաժանմունք 2013 թվականի փետրվարի 19-ին, ժամը 23-ի սահմաններում: Այսինքն, դիմումներն անգամ փոստային բաժանմունքին էին հանձնվել ընտրական օրենսգրքով նախատեսված վերջնաժամկետի լրանալուց հետո: Նման պայմաններում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ դիմումներով վարչական վարույթների հարուցումը մերժելու մասին:

Մնացած 47 դիմումների քննության արդյունքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ դիմումատուի պահանջը մերժելու մասին:

Նշված դիմումների քննությանը մասնակցել են Հանրապետության Նախագահի թեկնածուի ներկայացուցիչները, սակայն կայացված որոշումները ոչ վերադասության և ոչ էլ վարչական արդարադատության կարգով չեն բողոքարկվել:

Նկատենք, որ միասնական ձևաթղթով ներկայացված դիմումներին, որոնցում արվել էին բացառապես վերացական ու տեսական ընդհանրական դատողություններ, որևէ ապացույց կցված չի եղել: Դիմումների քննությանը ներկայացած դիմումատու թեկնածուի լիազոր ներկայացուցիչների կողմից ևս որևէ ապացույց չի ներկայացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին:

Այդուհանդերձ, չնայած որ ներկայացված դիմումները մերժվել են, սակայն թյուր կարծիք չձևավորվելու համար կատարեք որոշ վերլուծություն: Նկատի ունենալով, որ բոլոր դիմումները եղել են նույն ձևաթղթի վրա, ոչ մի տարբերակիչ գործոն դրանցում չի եղել, ուստի անհասկանալի է թե ինչ տրամաբանությամբ էին ընտրվել այդ 120 տեղամասերը, քանզի խոսքը վերաբերում էր ոչ թե վերահաշվարկի, այլ տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչմանը:

Նշված 120 տեղամասերից 5-ում բոլոր թեկնածուներից ավելի շատ ձայներ ստացել է Ռաֆֆի Հովհաննիսյանը (տեղամասեր 17/1, 17/16 (62.61%), 17/31, 17/21, 17/27): Այդ տեղամասերից 9-ում մասնակցությունը կազմել է 44-50%, 37-ում՝ 50-60%, 31-ում՝ 60-70%, 19-ում՝ 70-80% և միայն 24-ում է 80-ից բարձր մասնակցության տոկոս: Ի դեպ այդ 24-ից մեկը Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկն է, իսկ 5-ում մասնակցել են զինվորներ:

Նշված 120 տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովներից 7-ում հանձնաժողովի նախագահը եղել է «Ժառանգություն» կուսակցության կողմից նշանակված, 7-ում՝ ՀԱԿ-ի կողմից, 6-ում՝ ՀՅԴ-ի կողմից, 37-ում՝ ԲՀԿ-ի կողմից նշանակված, քարտուղարների մասով պատկերը հետևյալն է՝ 5-ում «Ժառանգություն», 10-ում՝ ՀԱԿ, 6-ում՝ ՀՅԴ, 42-ում՝ ԲՀԿ: 120 տեղամասային ընտրական հանձնաժողովներից «Ժառանգություն» կուսակցությունը ներկայացուցիչ է ունեցել 114-ում, ՀԱԿ-ը՝ 93-ում, ՀՅԴ-ն՝ 111-ում, ԲՀԿ-ն՝ 115-ում: Նշված 120 տեղամասերից 57-ում ներկա են գտնվել Ռաֆֆի Հովհաննիսյանի վստահված անձինք, 44-ում՝ Հրանտ Բագրատյանի, 5-ում՝ Պարույր Հայրիկյանի:

Նկատենք նաև, որ նշված 120 տեղամասերից 16-ում Ռաֆֆի Հովհաննիսյանը ստացել է մինչև 10%, 23-ում՝ 10-20%, 32-ում՝ 20-30%, 41-ում՝ 30-40%, 4-ում՝ 40-50%, 4-ում 50%-ից ավելի կողմ ձայներ:

Նշված տեղամասերի հետ կապված վստահված անձանց կողմից վերահաշվարկի վերաբերյալ որևէ դիմում չի ներկայացվել, հանձնաժողովի որևէ անդամ հատուկ կարծիք չի ներկայացրել: Տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները ստորագրվել են հանձնաժողովների բոլոր անդամների կողմից:

Նկատենք, որ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն նաև թեկնածուի վստահված անձը, եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում

կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին: Նշված 120 տեղամասերում ներկա են գտնվել Հանրապետության Նախագահի թեկնածուներից 4-ի ընդհանուր թվով 203 վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում աշխատել են 951 հանձնաժողովի անդամներ: Փաստորեն հիշատակված 120 տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու իրավասություն ունեցող նշված 1154 քաղաքացիներից որևէ մեկը նման դիմում չի ներկայացրել: Հիշյալ 120 տեղամասերից միայն 2-ի գրանցամատյանում են առկա եղել գրառումներ:

Ժա) Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումների վերաբերյալ գրառումներ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում»:

1988 տեղամասային ընտրական հանձնաժողովների միայն թվով 40 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն կատարվել գրառումներ, իսկ 1948 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ: Այսինքն, գրառումներ են կատարվել տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանների ընդհանուր թվի միայն 2 տոկոսում:

Բոլոր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավանորմերի պահանջների համաձայն ուսումնասիրել են ընտրատարածքի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները և թվով 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ թիվ 7, 12, 13, 15, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41 կազմել են համապատասխան արձանագրություններ գրառումների բացակայության վերաբերյալ, իսկ թվով 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 14, 16, 17, 30 կայացրել են որոշումներ «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ», որոնցով ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրություններում համապատասխան ընտրատարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 18.02.2013թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Ժբ) Դիմում-բողոքների քննարկում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենգրքի 45-47 հոդվածները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սկզբունքներին համապատասխան և ընտրական հարաբերությունների առանձնահատկությունների հաշվառմամբ մանրամասն կանոնակարգում են հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգն ու պայմանները:

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրության կազմակերպման և անցկացման ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո մինչև ընտրության արդյունքի ամփոփումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել 16 դիմում-բողոք և 2 հաղորդում:

Ներկայացված բոլոր դիմումները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 45-րդ, 46-րդ և 47-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ, տրվել գրավոր պատասխաններ:

Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմումատուները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները սահմանված կարգով ուղարկվել են դիմումատուներին և հրապարակվել կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Դիմումատուները, որպես կանոն, ներկայացել են իրենց դիմումների քննարկմանը և դիմումի քննության ընթացքում լիարժեք ծավալով ապահովվել է վերջիններիս լսվելու իրավունքը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր նիստերն արձանագրվել են սահմանված կարգով, իսկ 2013 թվականի փետրվարի 1-ից հանձնաժողովի բոլոր նիստերն ամբողջ ծավալով ուղիղ ժամանակային ռեժիմում առցանց (on-line) հեռարձակվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացված դիմում-բողոքներից 5-ը վերաբերել են ընտրական գրավի գումարի վճարման հանգամանքին և ներկայացված են եղել Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման փաստաթղթեր ներկայացրած մեկ քաղաքացու կողմից: Թե՛ հիմնավորումների, և թե՛ պահանջի մասով ներկայացված դիմումները կրկնել են միմյանց: Մեկ դիմում ներկայացված է եղել ևս Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման փաստաթղթեր ներկայացրած քաղաքացու կողմից, որը պահանջում էր արգելել ՀՀ ԿԸՀ-ի որևէ անդամի զբաղվել հակաքարոզով:

Երկու դիմում ներկայացվել էր Հանրապետության Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի կողմից.

- 15.01.2013թ. դիմումով պահանջվում էր, ուսումնասիրել միջազգային փորձը, որի ուսումնասիրությունը կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին կբերեր այն եզրահանգման, որ պետությունն իրավունք ունի զրկել իշխանության թեկնածուին

ընտրություններում մասնակցելու հնարավորությունից, երբ նման մասնակցությունը վտանգում է հանրային բարձրագույն շահը: Համոզված լինելով, որ օրենքի տարրի բացակայությունը արգելանք չի կարող լինել՝ հաստատելու այն քաղաքական իրողությունը, որը պիտի լիներ դրա առկայության դեպքում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 18.01.2013թ. N 30-Ա որոշմամբ մերժել է ՀՀ Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի 15.01.2013թ. դիմումը:

- 04.02.2013թ. դիմումով պահանջվում էր ԿԸՀ-ից՝ միջոցներ ձեռնարկել ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նկատմամբ և արգելել նրան իր քարոզչության մեջ դիմումատուի պատկերի օգտագործումը և թյուր տեղեկատվության տարածումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 06.02.2013թ. N 40-Ա որոշմամբ մերժել է ՀՀ Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի 04.02.2013թ. դիմումը:

Երկու դիմում ներկայացվել էր Հանրապետության Նախագահի թեկնածու Արման Մելիքյանի կողմից.

- 15.01.2013թ. դիմումով պահանջվում էր հրապարակել ՀՀ անկախացումից ի վեր՝ ՀՀ քաղաքացիություն ընդունած երկքաղաքացիների, ՀՀ-ից հեռացած քաղաքացիների, ՀՀ քաղաքացիությունից դուրս եկած անձանց վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 18.01.2013թ. N 32-Ա որոշմամբ ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանի 15.01.2013թ. դիմումը մասնակի բավարարել է՝ ՀՀ քաղաքացիություն ընդունած երկքաղաքացիների, ՀՀ քաղաքացիությունից դուրս եկած անձանց վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալներ հրապարակելու մասով դիմումը վերահասցեագրել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, իսկ ՀՀ-ից հեռացած քաղաքացիների վերաբերյալ տվյալների հավաքագրման և հրապարակման մասով՝ մերժել:

- 06.02.2013թ. դիմումով պահանջվում էր որպեսզի ԿԸՀ-ն իր լիազորությունների և պարտականությունների բերումով կանխի ընտրակեղծարարությունը՝ ՀՀ-ից հեռացած ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների վերաբերյալ արժանահավատ թվային տվյալները հանրությանը հասանելի դարձնելու միջոցով: Նկատի ունենալով դիմումի պահանջի անհստակությունը, ինչպես նաև դիմումում նշված փաստական հանգամանքերի հստակեցումը կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիմումատուի մասնակցությամբ իրականացրել է վարչական լսում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 11.02.2013թ. N 48-Ա որոշմամբ մերժել է ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանի 06.02.2013թ. դիմումը:

Հանրապետության Նախագահի ընտրության քվեարկության օրը կենտրոնական ընտրական հանձնաժողովում դիմում, բողոք չի ստացվել, իսկ քվեարկության օրվանից հետո կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել և մուտքագրվել է հինգ դիմում՝ տեղական դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից մեկ դիմում, Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական շտաբի համակարգող Կալենչյանի կողմից մեկ դիմում և երկու դիմում՝ թիվ 3/06 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ

Բոյախչյանից (ՀԱԿ) և թիվ 3/07 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Խաչատրյանից (ՀԱԿ) ՝ իրենց իրավունքների իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ և մեկ դիմում Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի լիազոր ներկայացուցիչ Մարտիրոսյանից:

- տեղական դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից ներկայացված դիմումը վերաբերում էր քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողություններին: Հիմք ընդունելով ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, համաձայն որի տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով դիմումը վերահասցեագրվել է թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

- Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական շտաբի համակարգող Կալենչյանի 20.02.2013թ. դիմումով պահանջվում էր անմիջապես, բոլոր ԸԸՀ-ներում դադարեցնել ՀՀ նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի դիմումների հիման վրա կատարվող քվեարկության արդյունքների վերահաշվարկները և դրանք սկսել միայն և պարտադրաբար թեկնածուի շտաբին տեղյակ պահելուց և Հովհաննիսյանի վստահված անձանց, լրագրողների, դիտորդների՝ ԸԸՀ-ներ ժամանելուց հետո:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 21.02.2013թ. N 56-Ա որոշմամբ մերժել է քաղաքացի Կալենչյանի 20.02.2013թ. դիմումը՝ փաստելով, որ ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

- Թիվ 3/06 և 3/07 տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների դիմումներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ դրանցում ներկայացված փաստերն օրենքով սահմանված կարգով քննության առարկա դարձնելու համար:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 2013 թվականի փետրվարի 22-ին ստացվել և մուտքագրվել է Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի լիազոր ներկայացուցիչ Մարտիրոսյանի բողոքը՝ թիվ 25 և թիվ 26 ԸԸՀ-ների՝ փետրվարի 19-ին դրսևորված անգործության վերաբերյալ և կից ներկայացվել է վերահաշվարկ կատարելու մասին 9 դիմում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացված դիմումները վերահասցեագրել է համապատասխանաբար թիվ 25 և թիվ 26 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին՝ սահմանված կարգով քննելու համար: 2013 թվականի փետրվարի 23-ին հրավիրված արտահերթ նիստերում թիվ 25 և թիվ 26 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները քննել են ներկայացված դիմումները և կայացրել համապատասխան որոշումներ:

Թիվ 17, 25 և թիվ 26 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները դիմումատուների կողմից մինչև ընտրության արդյունքի ամփոփումը ոչ վերադասության և ոչ էլ վարչական արդարադատության կարգով չեն վիճարկվել:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 2013 թվականի փետրվարի 25-ին ստացվել և մուտքագրվել է Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի դիմումը՝ ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դատարան դիմելու մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 25.02.2013թ. N 60-Ա որոշմամբ դիմումը մերժել է:

Այսպիսով, կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված 16 դիմումներից 10-ի վերաբերյալ կայացվել է 10 որոշում, 2-ը՝ վերահասցեագրման կարգով ներկայացվել են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին, 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազություն, 2-ին տրվել է գրավոր պատասխան:

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրության արդյունքների ամփոփումից՝ 25.02.2013թ. հետո կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել և մուտքագրվել է 3 դիմում-բողոք՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի վստահված անձ Պետրոսյանից 1 դիմում-բողոք, հասարակական կազմակերպության դիտորդներից 1 բողոք և քաղաքացի Եգորյանից 1 բողոք:

Ներկայացված դիմումները ևս քննարկվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 45-րդ, 46-րդ և 47-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ և կայացվել են համապատասխան որոշումներ:

- Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի վստահված անձ Պետրոսյանի՝ 26.02.2013թ. դիմում-բողոքով պահանջվում էր չեղյալ համարել թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 23.02.2013թ. N 63-Ա որոշումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 28.02.2013թ. N 63-Ա որոշմամբ մերժել է Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի վստահված անձ Պետրոսյանի՝ 26.02.2013թ. դիմում-բողոքը՝ փաստելով, որ թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գործել է ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերին համապատասխան՝ իր լիազորությունների սահմաններում, հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 23-ի թիվ 63-Ա որոշումն իրավաչափ է և բխում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներից:

- Հասարակական կազմակերպության դիտորդների կողմից 28.02.2013թ. ներկայացված բողոքով պահանջվում էր «անվավեր ճանաչելով թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 6-Ա որոշումը և ընդունելով նոր վարչական ակտ»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 06.03.2013թ. N 67-Ա որոշման 1-ին կետով մերժել է բողոքը՝ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 23.02.2013թ. N 6-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ, իսկ 2-րդ կետով՝ բողոքով ներկայացված նյութերն ընդունել է որպես հաղորդագրություն և դրանք ներկայացրել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը՝ բողոքում ներկայացված փաստերն օրենքով սահմանված կարգով քննության առարկա դարձնելու համար:

- Քաղաքացի Եգորյանի կողմից 28.02.2013թ. ներկայացված բողոքով պահանջվում էր «անվավեր ճանաչելով թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 7-Ա, 8–Ա, 9-Ա, 10-Ա, 11-Ա որոշումները և ընդունելով նոր վարչական ակտ»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 06.03.2013թ. N 68-Ա որոշմամբ մերժել է Եգորյանի բողոքը՝ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 7-Ա, 8-Ա, 9-Ա, 10-Ա, 11-Ա որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ բողոքը:

Հանձնաժողովի նիստերին ներկա գտնվող դիմումատուները, նրանց ներկայացուցիչները մասնակցել են դիմումների քննարկմանը, ներկայացրել իրենց հիմնավորումները, դիմումների շրջանակներում հարցեր տվել զեկուցողներին, ցանկության դեպքում հանդես եկել ելույթներով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացնելով վերահսկողություն նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ երկու դեպքում սեփական նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթներ, հրավիրել վարչական լսումներ և կայացրել համապատասխան որոշումներ, ներկայացված երկու հաղորդումներով անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Ընտրությունների կազմակերպման ընթացքում, մինչև քվեարկության օրը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին չի ներկայացվել որևէ դիմում կամ բողոք:

Քվեարկության օրը 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից միայն մեկում՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում է ստացվել մեկ դիմում՝ ընտրողների ցուցակում անճշտության վերաբերյալ, որին պատասխանվել է հանձնաժողովի նախագահի գրությամբ և մեկ հաղորդում՝ թիվ 29-ը ԸԸՀ-ում, որով կայացվել է համապատասխան որոշում:

Հանրապետության Նախագահի ընտրության քվեարկության օրվանից հետո քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու և վերահաշվարկի վերաբերյալ արդեն իսկ ներկայացված դիմումներից զատ միայն թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում են ստացվել դիմումներ: Երկու դիմում ներկայացվել է Հանրապետության Նախագահի թեկնածու Հ. Բագրատյանի վստահված անձի կողմից, հինգ դիմում տեղական դիտորդի կողմից, որոնք սահմանված կարգով քննվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից: Թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կենտրոնական ընտրական հանձնաժողովից

վերահասցեագրման կարգով ստացել և քննել է տեղական դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից ներկայացված մեկ դիմում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ 2013 թվականի հունվարի 25-ից կենտրոնական ընտրական հանձնաժողովում ձևավորվել է իրավիճակային վերլուծությունների կենտրոն, որի նպատակն է պատասխանել կամ պարզաբանումներ ներկայացնել էլեկտրոնային փոստով հանձնաժողովում ստացվող քաղաքացիների պարզաբանում կամ տեղեկատվություն հայցող նամակներին ու հարցումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն էլեկտրոնային փոստով ստացել է չորս տասնյակ նամակներ տարբեր քաղաքացիներից, որոնք կրել են խորհրդատվություն կամ տեղեկատվություն ստանալու բնույթ: Բոլոր նամակներին տրվել են պատշաճ պատասխաններ, իսկ պատասխանները հրապարակվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Իրավիճակային վերլուծությունների կենտրոնի կողմից հատկապես քվեարկության օրն ուսումնասիրվել են էլեկտրոնային կայքերում (panorama.am, news.am, hra.am, lurer.com, asparez.am, ilur.am, haynews.am, aravot.am, 1in.am, tert.am, slaq.am, galatv.am և այլն) և զանգվածային լրատվության միջոցներում ներկայացվող տեղեկությունները, պարզվել է տեղեկությունների հավաստիությունը, 65 հրապարակումներով ներկայացվել են պարզաբանումներ կամ տրամադրվել են տեղեկություններ, իսկ խախտումներին վերաբերող փաստերի հաստատման դեպքում հանձնաժողովի կողմից անմիջապես ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ խախտումները կանխելու, հետևանքները վերացնելու համար:

ժգ) Դատարան ներկայացված հայցադիմումները և դրանց քննությունը

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքում մինչև ընտրության արդյունքի ամփոփումը ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել երեք հայցադիմում.

1. Քաղաքացի Ռոբերտ Սիմոնյանի կողմից. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. հունվարի 8-ի 6-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին»:

Նշված որոշմամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցվելու համար փաստաթղթերը լրացնելու համար Ռոբերտ Սիմոնյանին տվել էր 48 ժամ ժամանակ՝ նվազագույն աշխատավարձի 8.000-ապատիկի չափով ընտրական գրավի վճարման անդորրագիր ներկայացնելու համար:

Թիվ ՎԴ/0094/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 11.01.2013թ. կայացրել է որոշում հայցը մերժելու մասին:

2. Քաղաքացի Նարինե Մկրտչյանի կողմից. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. հունվարի 14-ի 22-Ա որոշումը անվավեր ճանաչելու և իր

թեկնածության գրանցման մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին»:

Նշված որոշմամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել էր Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրություններին Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված Նարինե Հովհաննեսի Մկրտչյանի գրանցումը, քանի որ տրամադրված ժամկետը լրանալուց հետո նրա կողմից չէր ներկայացվել նվազագույն աշխատավարձի 8.000-ապատիկի չափով ընտրական գրավի վճարման անդորրագիրը:

Թիվ ՎԴ/0359/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 21.01.2013թ. կայացրել է որոշում հայցը մերժելու մասին:

3. Քաղաքացի Ռուբեն Այվազյանի կողմից. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. հունվարի 18-ի թիվ 31-Ա որոշումն անվավեր ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջի մասին»:

Նշված որոշմամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել էր քաղաքացի Ռուբեն Այվազյանի 10.01.2013թ. դիմումը, որով քաղաքացին պահանջել էր հանձնաժողովից արգելել որպեսզի ԿԸՀ որևէ անդամ զբաղվի հակաքարոզով: Վերջինիս կողմից հակաքարոզ էր որակվել այն հանգամանքը, որ ԿԸՀ նախագահը և քարտուղարը նշել էին, որ չէին ճանաչում իրեն:

Թիվ ՎԴ/0377/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 25.01.2013թ. կայացրել է հայցը մերժելու մասին որոշում:

Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքների ամփոփումից հետո ՀՀ վարչական դատարանին է ներկայացվել ևս 4 հայցադիմում:

1. Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի կողմից դատական կարգով բողոքարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործությունը, ինչպես նաև 25.02.2013թ. թիվ 60-Ա որոշումը և ներկայացված հայցադիմումով պահանջվել էր.

«Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործությունը:

Պարտավորցնել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուսումնասիրել ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի ավելի քան 1600 քարոզչական շտաբների վրա տեղադրված քարոզչական պաստառների շուկայական արժեքը և այդ ծախսերը ներառել ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի քարոզչական ծախսերի մեջ:

ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի քարոզչական ծախսերը ՀՀ ընտրական օրենսգրքի 88 և 26 հոդվածի 5-րդ մասով սահմանված չափերը ավելի քան 10 տոկոսով գերազանցելու դեպքում ընտրությունները ճանաչել անվավեր կամ դիմելու դատարան ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:

Անվավեր ճանաչել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի «Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի դիմումի քննարկման մասին» թիվ 60-Ա որոշումը»:

Թիվ ՎԴ/1423/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 04.03.2013թ. կայացրել է որոշում հայցը մերժելու մասին:

2. Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի վստահված անձ Լուսինե Պետրոսյանի կողմից դատական կարգով բողոքարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 28-ի թիվ 63-Ա որոշումը և թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 23-ի թիվ 63-Ա որոշումները:

Թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր 2013 թվականի փետրվարի 23-ի թիվ 63-Ա որոշմամբ մերժել էր Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի լիազոր ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանի կողմից ներկայացված վերահաշվարկի պահանջի մասին դիմումները:

Թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 23.02.2013թ. թիվ 63-Ա որոշումը վերադասության կարգով բողոքարկվել էր կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որն էլ իր 28.02.2013թ. N 63-Ա որոշմամբ մերժել է Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի վստահված անձ Լուսինե Պետրոսյանի՝ 26.02.2013թ. դիմում-բողոքը:

Թիվ ՎԴ/1606/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 09.03.2013թ. կայացրել է որոշում հայցը մերժելու մասին:

3. «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիտորդների կողմից դատական կարգով բողոքարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի մարտի 6-ի թիվ 67-Ա որոշումը:

Թիվ ՎԴ/1754/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 25.03.2013թ. կայացրել է որոշում հայցը մերժելու մասին:

4. «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիտորդի կողմից դատական կարգով բողոքարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի մարտի 6-ի թիվ 68-Ա որոշումը: Թիվ ՎԴ/1755/05/13 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ ՀՀ վարչական դատարանը 25.03.2013թ. կայացրել է որոշում հայցը մերժելու մասին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում կարող են ներկայացնել թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը): Նման դիմում կենտրոնական ընտրական հանձնաժողովին որևէ թեկնածուի կողմից չի ներկայացվել:

ժդ) Ընտրությունների արդյունքների բողոքարկում

Ժողովրդավարական ընտրությունների անցկացումը ենթադրում է մասնակիցների իրավունքը՝ առաջադրելու նաև ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հարց: Դրա հետ միասին, նման հարցադրման և ընտրությունների արդյունքներն

անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ են ծանրակշիռ հիմքեր: Պետք է հաստատվեն օրենսդրության այնպիսի խախտումներ, որոնք թույլ չեն տալիս վստահորեն վերականգնելու ընտրությունների իրական արդյունքները:

Եթե ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելը բացառությունից դառնում է կանոն, կամ երբ ընտրությունների արդյունքները վիճարկելը դառնում է ընտրական գործընթացի հերթական պարտադիր փուլ, ապա նման ընտրական համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև բարձր իրավական կուլտուրայի առկայությունը իրավմամբ կասկածի տակ կարող է դրվել:

Ընտրությունների արդյունքների բողոքարկումը չպետք է դիտարկել որպես ընտրությունների հերթական փուլ: Ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ առկա են հիմնավոր ապացույցներ, որ ընտրությունների և ընտրությունների արդյունքները ամփոփելու ընթացքում տեղի ունեցած խախտումները թույլ չեն տալիս ճշգրտորեն սահմանելու ընտրողների կամաարտահայտության արդյունքները: Ինքնին ընտրական հանձնաժողովների կողմից առանձին դեպքերում ընտրական պրոցեսների խախտումը, չի կարող դիտարկվել որպես բավարար հիմք ընտրությունների արդյունքների փոփոխման համար:

Ընտրությունների ժամանակ որոշ ձևական պահանջների պահպանման առումով կարող է իմաստազրկվել ընտրությունների սահմանադրական, ժողովրդավարական էությունը, որպես ազատ կամաարտահայտության ինստիտուտ: Հենց սրանում է նաև ընտրությունների տարբերությունը կառավարչական բյուրոկրատական պրոցեսներից: Ընտրությունների էությունը կայանում է քաղաքացիների կողմից իրենց պատկանող քաղաքական իրավունքների իրականացման մեջ: Իսկ այդ պրոցեսի արդյունքները չի կարող որոշվել բացառապես բյուրոկրատական հիմքերով:

Միայն ընտրությունների արդյունքների վրա ազդող խախտումների առկայության պարագայում կարող է ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչվել: Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելիս պետք է դրվի քաղաքացիների ընտրական իրավունքի առաջնայնությունը: Հատկապես ընտրությունների արդյունքներում է նյութականացվում ընտրողների կամաարտահայտությունը: Այդ իսկ պատճառով ընտրությունների արդյունքների պաշտպանության բավարար երաշխիքների ստեղծման հարցում կարևորվում է ընտրությունների արդյունքների վավերականության կանխավարկածը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը լուծում է սահմանադրական դատարանը:

Հանրապետության Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի և Հանրապետության Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի կողմից վիճարկվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2013 թվականի մարտի 14-ի թիվ ՍԴՈ-1077 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի թիվ 62-Ա որոշումը թողնվել է ուժի մեջ:

Ընտրության կազմակերպման և անցկացման ընթացքում արձանագրված խախտումների վերլուծություն

Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրության կազմակերպման՝ նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված առանձին խախտումներ վերաբերել են արգելված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն, չթույլատրված վայրերում ընտրական շտաբների տեղակայման, վարչական ռեսուրսի չարաշահումների և այլ մասնավոր դեպքերի:

Նախընտրական քարոզչության կազմակերպման կարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչները Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ կազմակերպել են շրջայցեր Երևան քաղաքում, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները՝ ընտրատարածքում գտնվող բնակավայրերում: Օրենքով չսահմանված վայրերում փակցված նախընտրական քարոզչական նյութեր հայտնաբերվելու դեպքում դրանք անմիջապես վերացվել են:

Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից արձանագրված փաստերի համաձայն նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրական գործընթացի հետ առնչվող հանցագործության դեպքեր, բացի Հանրապետության Նախագահի թեկնածու Պ. Հայրիկյանի նկատմամբ կատարված մահափորձի դեպքի, չեն եղել: Նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրական խախտումների վերաբերյալ դատախազության մարմինների կողմից ընթացք է տրվել 88 հաղորդումների, հայտարարությունների և հրապարակումների, որոնք, սակայն, չեն պարունակել որևէ հանցագործության հատկանիշներ: Նախընտրական քարոզչության ընթացքում թույլ տրված ընտրախախտումների մասին ստացված հաղորդումների, հայտարարությունների և հրապարակումների վերաբերյալ նախաքննական մարմինների կողմից կայացված որոշումների օրինակներն ուղարկվել են դրանց հեղինակներին, և նշված որոշումներից որևէ մեկը չի բողոքարկվել:

Ընտրական գործընթացի մյուս փուլի՝ քվեարկության առնչությամբ դատախազության կողմից ընթացք է տրվել 159 հաղորդումների, հայտարարությունների և հրապարակումների, հարուցվել է 13 քրեական գործ, 4 քրեական գործեր մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ:

Գնահատելով ընտրական գործընթացում իրավախախտումների ամբողջական պատկերը՝ ՀՀ դատախազությունն արձանագրել է, որ ըստ էության ողջ ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված խախտումները զանգվածային ու տարածված

բնույթ չեն կրել, իսկ տեղ գտած հանցագործության փաստերն առանձին և միմյանցով չպայմանավորված դեպքեր են:

Ընտրական գործընթացին առնչվող հարուցվել է 13 քրեական գործ, որից՝

ՀՀ քր. օր.-ի 34-305-րդ հոդվածով - 1 գործ.

ՀՀ քր օր.-ի 34-153-րդ հոդվածով - 5 գործ.

ՀՀ քր. օր.-ի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով - 2 գործ.

ՀՀ քր. օր.-ի 149-րդ հոդվածի 1-ին մասով - 1 գործ.

ՀՀ քր. օր.-ի 153-րդ հոդվածով և 149-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով - 1 գործ.

ՀՀ քր. օր.-ի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով - 1 գործ.

ՀՀ քր օր.-ի 154-րդ հոդվածով - 1 գործ.

ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 1-ին մասով - 1 գործ:

Ընդամենը՝ 13 գործ - 9 անձ վերաբերյալ, որից՝ 4 գործ 6 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 1 գործ 1 անձի վերաբերյալ ավարտվել է, 6 գործ կարճվել է և 3 գործ 3 անձի վերաբերյալ ընթացքի մեջ է:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել տեղեկատվություն Հանրապետության Նախագահի ընտրությունների ընթացքում ընտրախախտումների դեպքերով ՀՀ ոստիկանությունում կատարված քննությունների վերաբերյալ:

2013թ. փետրվարի 18-ի Հանրապետության Նախագահի ընտրությունների ընթացքում պատշաճ հասարակական կարգ ու հասարակական անվտանգություն հաստատելու, ընտրությունների անցկացման բնականոն ընթացքն ապահովելու, յուրաքանչյուր քաղաքացու ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու դեպքերը բացառելու, ընտրական գործընթացում հնարավոր իրավախախտումները կանխելու, խափանելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատում, ՀՀ ոստիկանության պետի հրամանով ստեղծվել և 2012թ. դեկտեմբերի 15-ից գործել է օպերատիվ շտաբ:

Օպերատիվ շտաբում ստեղծվել և 2013 թվականի փետրվարի 17-ից 19-ը ընկած ժամանակահատվածում գործել է բազմուղի «Թեժ գիծ» ծառայությունը, որի հեռախոսահամարները նախօրոք հրապարակվել են զանգվածային լրատվության միջոցներով:

Գործել են նաև «Թեժ գիծ» հեռախոսահամարներ միջազգային դիտորդական առաքելությունների համար՝ օտարալեզու օպերատորներով:

Օպերատիվ շտաբի կողմից վերլուծվել, քննարկվել և քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք է տրվել Հանրապետության Նախագահի ընտրությունների հետ կապված առերևույթ իրավախախտումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, Հանրապետության Նախագահի թեկնածուների, կուսակցությունների, ինչպես նաև անհատ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումներին ու ահազանգերին, բազմակողմանի ստուգման են ենթարկվել զանգվածային լրատվամիջոցներում, մասնավորապես ինտերնետային կայքէջերում զետեղված տեղեկությունները:

Հանրապետության Նախագահի ընտրությունների քարոզարշավի, քվեարկության և հետընտրական փուլերում առերևույթ իրավախախտումների վերաբերյալ ստացված ահազանգերով և տեղեկություններով ՀՀ ոստիկանությունում քննարկվել են 284 նյութ, որից 96-ը ստացվել են նախընտրական փուլում, 104-ը Հանրապետության Նախագահի ընտրության օրը և 84-ը հետընտրական փուլում:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրախախտումների վերաբերյալ 96 դեպքերից 63-ը եղել է ընտրակաշառքի մասին, 16-ը՝ քարոզարշավը խոչընդոտելու, 12-ը՝ ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելու, 1-ը՝ զրպարտչական տեղեկություններ տարածելու, 3-ը՝ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու և 1-ը՝ քվեարկության նախորդող օրը քարոզչություն կատարելու վերաբերյալ:

Հիշյալ դեպքերից որպես ստուգման ենթակա տեղեկություն նախապատրաստվել է 11 նյութ և անհիմն լինելու պատճառով՝ եզրակացությամբ թողնվել է անհետևանք, 85 դեպքով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին, 8 դեպքեր միացվել են 3 նյութերում և որոշումներ են կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին, իսկ 1 նյութ որոշմամբ ուղարկվել է ՀՀ Հատուկ քննչական ծառայություն, որը ՀՀ գլխավոր դատախազության միջոցով վերադարձվել է Լոռու մարզի քննչական բաժին, որտեղ 12.03.2013թ. որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Քվեարկության օրը տեղի ունեցած ընտրախախտումների վերաբերյալ ստացված տեղեկություններով քննարկված 104 դեպքերից 37-ը վերաբերվել են ընտրակաշառքին, 20-ը՝ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն, 14-ը՝ քաղաքացու ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն, 12-ը՝ թեկնածուի վստահված անձի, դիտորդի, ԶԼՄ-ի ներկայացուցչի, կուսակցության լիազորված անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելուն, 10-ը՝ քվեարկության գաղտնիությունը խախտելուն, 5-ը՝ ընտրությունները կամ քվեարկության արդյունքները կեղծելուն, 1-ը՝ քարոզչություն կատարելուն և 5-ը այլ խախտումներ (ընտրացուցակի անճշտություն, վիճաբանություն ընտրատեղամասում, գողություն ընտրատեղամասից, ընտրատեղամասի մոտ գույքի դիտավորյալ վնասում, ինտերնետային փոստ ապօրինի մուտք գործել):

Հիշյալ դեպքերից 6-ով հարուցվել են քրեական գործեր, որից 4-ն ուղարկվել են դատարան, իսկ 2-ով նախաքննությունը շարունակվում է, 10 նյութ որպես նույնաբովանդակ կցվել է ընթացիկ նյութի, 1 նյութ եզրակացությամբ թողնվել է անհետևանք, 9 նյութեր ուղարկվել են Հատուկ քննչական ծառայություն (3 նյութ հետ է վերադարձվել): 81 նյութերով կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ, որից 48-ը՝ հետաքննության, իսկ 33-ը՝ նախաքննության մարմնի կողմից:

Նշված 104 ահազանգերից 41-ը ստացվել է Երևան քաղաքում, իսկ 63-ը՝ հանրապետության մարզերում:

ՀՀ ոստիկանության կողմից արձանագրվել է, որ ներկայացված տեղեկությունները բովանդակային առումով առավելապես ունեցել են ընդհանրական բնույթ, ընտրությունների հետ կապված տարբեր հանգամանքներ առանց որևէ հստակ

փաստարկման ներկայացվել են կասկածելի, վերլուծությունները կրել են սուբյեկտիվ բնույթ, իսկ ընտրությունների ընթացքի առանձին իրավիճակները որպես իրավախախտում մեկնաբանվել են առանձին անձանց սուբյեկտիվ ընկալման տեսանկյունից չունենալով որևէ հստակ հիմնավորումներ: ՀՀ ոստիկանությունը փաստել է նաև, որ ընտրախախտումների վերաբերյալ ահազանգերն ու դրանց ուսումնասիրումը վկայում են, որ դրանք չեն կրել համատարած ու համակարգված բնույթ, միաժամանակ դրանց գերակշիռ մասը եղել է չհիմնավորված ու չփաստարկված:

Առաջարկվող օրենսդրական փոփոխություններ

Հայաստանի Հանրապետության նոր ընտրական օրենսգիրքն էական առաջընթաց արձանագրեց ընտրական իրավահարաբերությունների կարգավորման բնագավառում, այնուամենայնիվ ընտրական օրենսգրքի պրակտիկ կիրարկումը ցույց տվեց, որ ընտրական գործընթացը կարգավորող առանձին նորմեր և ինստիտուտներ ունեն կատարելագործման անհրաժեշտություն:

Այսպես՝

ա) 2012 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ է մտել «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն քաղաքացիներն իրավունք ունեն փոխանակելու ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերը: Համաձայն «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նույնականացման քարտի վավերապայմանները:

Նշված իրավանորմից ակնհայտ է, որ նույնականացման քարտը չի պարունակելու քաղաքացու հաշվառման վայրի հասցեն: Համաձայն գործող ընտրական օրենսգրքի կանոնակարգումների ընտրողների ցուցակների կազմումը իրականացվում է ըստ հաշվառման հասցեների, իսկ ընտրական տեղամասում ընտգրողի նույնականացումն իրականացվում է նաև վերջինիս հաշվառման հասցեով: Նշվածից ակնհայտ է, որ ընտրական օրենսգիրքը պետք է լրացվի նոր կանոնակարգումներով, որոնցով պայմանավորված անձը հնարավորություն կստանա մասնակցելու քվեարկությանը նույնականացման քարտը ներկայացնելու միջոցով:

Հարկ է նկատել նաև, որ նույնականացման քարտերի պարագայում կապված քարտի ֆիզիկական հատկանիշների հետ հնարավոր չէ կիրառել նաև դրոշմակնքման ինստիտուտը, ինչը ևս անխուսափելիորեն պահանջվում է նոր օրենսդրական լուծումների ամրագրում ընտրական օրենսգրքում:

բ) թեև գործող օրենսդրական կարգավորումները հնարավորություն տալիս են նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ իրականացնել պատշաճ և արդյունավետ վերահսկողություն, այնուամենայնիվ ընտրական օրենսդրության բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի քանի հարցերի:

Նախ, ի թիվս այլ հարցերի, որոնք բարձրացվել էին նախորդ հաղորդագրության մեջ, մեր կարծիքով, ընտրական օրենսգրքում պետք է լուծվի նախընտրական քարոզչության ֆինանսավորման իրավահարաբերությունները կարգավորող նորմերի

խախտման հետևանքով թեկնածուի, կուսակցության և կուսակցությունների դաշինքի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու ողջամտության հարցը:

Խնդիրը նրանում է, որ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Եթե նախընտրական քարոզչության համար ծախսված գումարի և սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պետական բյուջե վճարվող գումարների գումարի չափի և նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափի տարբերությունը գերազանցում է նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափի 10 տոկոսը, ապա ընտրական հանձնաժողովի դիմումի հիման վրա դատարանը ուժը կորցրած է ճանաչում թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը»:

Նույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ»:

Ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքները ամփոփում է քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը:

Նշված հոդվածների համադրված վերլուծությունից գալիս ենք այն հետևության, որ թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի կողմից նախընտրական քարոզչության ֆինանսավորման իրավահարաբերությունները կարգավորող նորմերի խախտման փաստերը կարող են ի հայտ գալ ընտրական օրենսգրքով նախատեսված երրորդ հաշվետու ժամանակահատվածում, այսինքն քվեարկությունից 4 օր հետո, այն դեպքում, երբ արդեն ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներով պարզ է ընտրված թեկնածուն (կուսկացությունը, կուսկացությունների դաշինքը):

Կարծում ենք, անհրաժեշտ է ընտրական օրենսգրքում կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ, նախատեսելով այնպիսի մոտեցում, որ քվեարկության ավարտից հետո բացառվի թեկնածուի (կուսակցության, կուսակցությունների դաշինքի) գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հարցի քննարկամն հնարավորությունը: Քվեարկության ավարտից հետո քննարկման առարկա կարող են հանդիսանալ սոսկ ընտրությունների վավերականության հետ կապված հարցեր, բայց ոչ երբեք արդեն իսկ քվեարկված սուբյեկտի գրանցման հետ կապված հարցերը, քանզի այդ պարագայում հետևանքների կիրառման հարցը դառնում է անընկալելի:

գ) ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «… Հայտարարագրին կցվում են թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության

իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման համար կնքված պայմանագրերը»:

Նախընտրական հիմնադրամների ծախսերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում, որպեսզի թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները հայտարարագրերին կից պայմանագրերից բացի ներկայացնեն նաև այդ պայմանագրերով ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսերը հիմնավորող այլ փաստաթղթեր ևս՝ վճարման հանձնարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլն:

Նման օրենդրական լրացումը առավել լիարժեք և ամբողջական կդարձնի ֆինանսական վերահսկողության ինստիտուտը:

դ) Անհրաժեշտ է հստակեցնել օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասը, նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման վերաբերյալ պատիժների կիրառման համաչափության համատեքստում: Խնդիրը վերաբերում է այն հանգամանքին, որ ցանկացած խախտում այդ թվում՝ ասենք մեկ քարոզչական պաստառի փակցված լինելը անթույլատրելի վայրում որևէ հիմնավորմամբ չի կարող հիմք հանդիսանալ գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դատարան դիմելու համար: Մասնավորապես, առաջարկվում է մոտեցում, ըստ որի թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար դատարան դիմելու իրավասություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտմումը կրում է շարունակական բնույթ, թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

ե) ընտրական օրենսգրքի 29 հոդվածի համաձայն տեղական դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունները: Նույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի աջակցելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը իրավունք ունի համապատասխան կազմակերպությանը զրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից: Նշված իրավադրույթն արմատական բարեփոխման անհրաժեշտություն ունի: Նախ կարծում ենք չափից ավելի խիստ պատժամիջոց է, երբ հազարավոր դիտորդներ ունեցող հասարակական կազմակերպությունը բացառապես մեկ դիտորդի ապօրինի վարքագծի արդյունքում զրկվի դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից: Մյուս կողմից, ինչպես ցույց է տալիս պրակտիկան առկա են հասարակական կազմակերպություններ, որոնք իրականացնելով, այսպես կոչված, դիտորդական առաքելություն սպասարկում են բացառապես այս կամ այն թեկնածուի,

ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի շահերը: Քանի որ, տեղական դիտորդական առաքելությունները իրենց գործունեությունը ծավալում են բացառապես քվեարկության օրը ներկայանալով ընտրական տեղամասեր, ապա մինչ այդ օրը սկզբունքորեն անհնար է պարզել վերջիններիս շահագրգռվածության հանգամանքը, իսկ քվեարկության օրը նման հանգամանքներ հայտնաբերելու դեպքում ԿԸՀ-ն պետք է իրականացնի վարչական վարույթ, ծանուցի մասնակիցներին, ուսումնասիրի և քննարկի բոլոր փաստական հանգամանքները և նոր միայն կայացնի որոշում: Նշվածից ակնհայտ է, որ անգամ ամենամեծ օպերատիվության պայմաններում անհնար է քվեարկության օրը կյանքի կոչել ընտրական օրենսգրքի վերոհիշյալ իրավադրույթի կանոնակարգումները: Վերոգրյալով պայմանավորված, կարծում ենք անհրաժեշտություն է առաջանում նորովի կանոնակարգել իրավահարաբերությունը:

զ) Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր նյութերի օգտագործման նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու, ինչպես նաև ընտրական օրենսգրքի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով անհրաժեշտ է լրամշակել օրենսգրքի 20-րդ հոդվածը, մասնավորապես նախատեսել նոր կանոնակարգումներ, ըստ որի՝

- համապետական և Երևանու ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառը կարող է փակցվել միայն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում,

- նախընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում վերացման են ենթակա նաև կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով պաստառները, տպագիր և այլ նյութերը՝ այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ և որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

է) առաջարկվում է նաև մանրամասն ուսումնասիրել դիտորդական առաքելությունների կողմից ներկայացված եզրակացություններում առկա առաջարկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ համապետական ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով կայացված որոշումներում ներկայացված իրավական դիրքորոշումները և ըստ անհրաժեշտության կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ: